ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Երևան, Չայլախյան 4

Հեռ. 57 63 37,

E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan

Tel. 57 63 37,

27.11.2025թ.

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

26.11.2025թ. հրապարակված արձանագրային որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ «Հասարակագիտություն» առարկայի բողոքարկման արդյունքների վերաբերյալ: «Հասարակագիտություն» առարկայի բողոքարկման հատվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Հասարակագիտություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. «Գոյաբանության վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ: Նշել դրանց համարները:» առաջադրանքը ունի երկու ճիշտ պատասխան՝ 1,3,5,7 և 1,5,7: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան նշել են 1,5,7 և միավոր չեն ստացել, տալ մեկ միավոր: Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Երևան, Չայլախյան 4

Հեռ. 57 63 37,

E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan

Tel. 57 63 37,

26.11.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 15-ին կազմակերպված «Հասարակագիտություն», «Գերմաներեն», «Կերպարվեստ», «Ասորերեն» և նոյեմբերի 16-ին կազմակերպված «Պատմություն» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովների նիստի որոշումների

2025թ. նոյեմբերի 24-ին կայացավ «Հասարակագիտություն», «Գերմաներեն», «Կերպարվեստ», «Պատմություն» առարկաների, նոյեմբերի 26-ին՝ «Ասորերեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովների նիստը:

«Պատմություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Գերմաներեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 25-րդ առաջադրանքում C-ն 2-րդ տարբերակի հետ համապատասխանեցրած և միավոր չստացած ատեստավորվողներին տալ մեկ միավոր, եթե 7,5,4,1,6 ճիշտ պատասխանի փոխարեն նշել են 7,5,2,1,6: Մյուս առաջադրանքների միավորները մնում են անփոփոխ:

«Կերպարվեստ» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 39-րդ առաջադրանքում պնդումների փնջում Ատլանտի մասին հարցը ունի ձևակերպման սխալ, բոլոր նրանց, ովքեր միավոր չեն ստացել այս պնդման համար, տալ մեկ միավոր: Մյուս առաջադրանքների բողոքարկման արդյունքում միավորները մնում են անփոփոխ:

«Հասարակագիտություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 16-րդ առաջադրանքը ունի երկու ճիշտ պատասխան՝ 1,3,5,7 և 1,7: Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ

պատասխան նշել են 1.7 և միավոր չեն ստացել, տալ մեկ միավոր: Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են անփոփոխ:

«Ասորերեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. նմուշային թեստի 36-րդ առաջադրանքից միավոր չստացած ատեստավորվողներին տալ միավոր, քանի որ առաջադրանքը չունի ճիշտ պատասխան: Նմուշային թեստի 60-րդ առաջադրանքում ճիշտ պատասխանը 3-ից բացի նաև 2-ն է: Այն ատեստավորվողներին, որոնք ճիշտ պատասխան են նշել 2-ը, տալ միավոր:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ